

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄ

Ներքին փոխ միկ ծախսով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ո Ւ Կ

Մանուշակահատիկ
20 տանիքով



ՀՐԱՔԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՒԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱՐ

ՀԱՄԱՐ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравунк"

ВАРНА

Հրապարակող եւս չեմ
տրուիր

ՀԱՅՎԱԿԱՆ ՂԵՒՊ ՄԻ

ՎԱՌԱՅԻ ՄԷՋ

Քաղաքակիրթ երկիրներու մէջ երկար ժամանակէ ի վեր ընդհանրացած է գլխաւի (երաստ) դրութիւնը, ամէն դասակարգ իրենց յատուկ գլխաւները ունին, ուր կը յաճախեն ընտրեալ կամ գէթ փոքր ի շատէ գաղափարակաց և մերթ աստիճանակից անձեր որոնք անդամ ընդունուած են և մասնաւոր վճարում մը կ'ընեն այդ հաստատութեան ծախքերուն օգնելու համար։ Այսպէս գլխաւը զբոսավայր ըլլալէ զատ, տեսակ մը ժամադրավայր ըլլալով ընտրեալ խումբի մը, շատ անգամ օգտակար խորհուրդներու և հանրագումար ձեռնարկներու առիթ կուտայ։

Քաղաքիո հայ վաճառականներու գասէն մէկ քանի անձեր Հայական Գլխաւ մը հաստատելու ազնիւ խորհուրդը յղացեր են, Շատ համակրելի կը գտնենք իրենց այս յղացումը։ մանաւանդ թէ քաղաքի մէջ տարբեր հասարակութիւններ, Պուլկար, Յոյն և Հրեայ, ունենալով իրենց գլխաւները, զգալի պակաս մըն է Հայերու խմբավայր մը չունենալը, Եւ աւելի քան պակաս մը, երբ նկատենք, թէ մենք Հայերս, ուրիշ հասարակութիւններէ շատ աւելի պէտք ունինք, դոնէ մեր պարագայ ժամերուն մէջ, իրար գալու ու գլխաւ գլխաւ տալով մեր տոհմային վիճակին և ապագային մասին խորհելու, խորհրդակցելու ու կարծիքներ փոխանակելու։ Բարեւոյնական խառնակութեան նմանող սրճարանական միջոցաւորը, կարծեմ, ոչ մէկ տեսակետով չէ կարելի իոկ բաղդատել Հայկական Գլխաւի մը խաղաղ, մաքուր լուրջ, պատուաբեր և օգտաւոր կեանքին։ Ուստի փափաքելի է որ հայ Գլխաւ մը հաստատելու ազնիւ խորհուրդը յղացողները առանց երկար օրեր ու չաբաթներ սպասելու, գործնական քայլ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԱՆԵԱԿ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Դ.

Ձինաստան իր պատմական յեղաշրջումին մէջ այն ֆազին արդէն հասեր է որ այլևս զինուորականութիւնը խորապէս կարհամարհէ, որովհետեւ զայն կը նկատէ լուրջ մարդու համար անվայել տղայական բան մը։ Բոլոր ժողովուրդները, անպատճառ ուշ կամ կանուխ, պիտի հասնին այս ըմբռնումին որ միայն կը համապատասխանէ մարդկային ընկերութեան իրականութեան։ Այս մասին և ուրիշ միջոցներ տեսակէտներով Ձինացիք յառաջ են քան Արևմուտքիք։ Ուրեմն ճիշտ է թէ եթէ Եւրոպացիք Ձինացուց հանդէպ յեղուգակներու և ծովահէններու ընթացք չը բռնեն, եթէ Եւրոպացիք նրբօրէն յարգեն Ձինացուց իրաւունքները, ասոնք չպիտի ստիպուին դէպի զինուորականութիւն յետադիմել։ Ոչինչ չը պիտի արգիլէ զանոնք միջազգային իրաւաստական դրութեան մէջ մտնելէ, վասնզի իրականութեան մէջ անոնք արդէն այդ ճամբուն վրայ են։

Արդարեւ, Ձինաստան գոյն փափաք մը ցոյց չտար իր դրացիներուն երկիրները տիրապետելու, ուրեմն անիկա հրաժարած է պատէրազմներէ։ Հետեւաբար եթէ Եւրոպան չստիպէ Ձինացիները ինքնապաշտպանութեան համար զինուորականութեան հետեւելու (և անգամ մը զինուորականութեան մէջ իյնալը չուտով պաշտպանողականէ յարձակողականի կառաւնորդէ) Ձինաստան վտանգ մը չպիտի ըլլայ։ Այլ աւելին կայ։ Անիկա պիտի հաճի հաւանականաբար շատ կամովին ինքն ալ մտնել Եւրոպական Դաշնակցութեան մէջ, որովհետեւ

այո միաւորութեան մէջ ան ալ մեծ օգուտ պիտի գտնէ, այն է անդորրութիւն առանց զինուորականութեան։ Անգամ մը որ Ձինաստան ալ Եւրոպական մէջ մտնէ սա երկրաշնչիս ամբողջ բնակչութեան 1550 միլիոնէն 1350 միլիոնը ընդգրկած պիտի ըլլայ, ուրեմն մարդկային ցեղին ահագին մեծամասնութիւնը կազմած կ'ըլլայ։

Գը մնայ ճարտը։ Արդարեւ Ձինաստանի հառակն է, անիկա իր պատմութեան այն ֆազին մէջն է յորում աշխարհակալութեան խորթակը շատ սրտածէ։ Բայց յայտնի է թէ ճարտը քաղաքակիրթ աշխարհի առջև արգաքսութեան կուտայից եղած է։ և որչափ ալ անկարգապահ ըլլալ ուղէ անկարողութեան պիտի մատնուի, մանաւանդ թէ կղզիներու բնակիչ ըլլալով նաւատորմիչներով կարելի է նուաճել։ Հիմա ծովի վրայ պատերազմելու մէջ առաջին դերը թիւի վրայ չէ այլ գործիքներու վրայ։ Այսինքն հարստութեան։ Մովային գործիքները սարսափելի սուղ են և կը բաւէ որ Եւրոպական ազգերը ունենան աւելի շատ նաւեր քան ճարտը, ստիպելու համար զանի միջազգային կարգապահութեան։

Արդէն իր դրացիներուն վրայ յարձակելու ժամանակ մը արգիլէ յետոյ ինչպէս ուրիշներ, նոյնպէս ալ ճարտը ժողովուրդը յեղաշրջում պիտի ըլլայ և չպիտի ուղէ այլևս յարձակել։

Ե.

Կը տեսնուի թէ Եւրոպական Դաշնակցութիւն և իրաւաստական համաձայնութիւնը շատ դիւրն պիտի ըլլայ և որով աշխարհակալութեան վերջակէտ պիտի դրուի և պիտի սկսի մեր մարդկային ձեղին համար գոյութեաննոր շրջան մը։

Երբ դադրի դրացիներու գաւառներուն տիրելու բաղձանքը անկէ յետոյ բանակները և տորմիչները անօգուտ պիտի նկատուին և տարեկան 20 միլիոն ծախսելով պատերազմական ուժ

պահելու պէտք չպիտի մնայ։ Առարկուի թերեւ թէ զօրագունքերը միայն դրացիին երկիրները տիրելու համար չէ որ կը պահուին այլ նաեւ ազգերու իրաւունքները պաշտպանելու համար։ Այս ճիշտ չէ բնաւ։ Այս ժամանակներու մէջ, ամեն պատերազմ երկրի մը ստացումով կը վերջանայ կոր։ Անձնասիրութեան վերաւորանք մը, փոքր իրաւազանցութիւն մը պատրուակ կը բռնեն ու պատերազմ կը հրատարկեն որուն արդիւնքը կ'ըլլայ միշտ յաղթողին երկիր մը տիրապետել։ Հետեւաբար բուն նպատակը երկիր մը տիրելն է, ինչ որ կստորաժնեցնու կը մզէ։ Այն օրէն երբ ազգերը հրաժարին բռնութեամբ տիրապետութենէ, շատ պարզ և շատ բնական կերպով պիտի կրնան իրենց մէջ ծագելիք անհամաձայնութիւնները կարգաւորել գաղափարներու դիմելով։

Բնականապէս երբ անիշխանութեան թուականը գոցուի, անմիջապէս կազմակերպութեան թուականը պիտի սկսի։ Կազմակերպութիւն մը պիտի հաստատուի և անիկա յաջորդաբար գոյութիւն պիտի տայ հարկաւոր հաստատութիւններու և օրենսդրութեան մը, որ հետզհետէ պիտի կատարելագործուի ու բարեփոխուի։ Միջազգային Միութեան առաջին ծրագիրը պիտի գծուի դիւանագէտներու համաժողովներով, ուր կարծեաց փոխանակութիւններ կը կատարուին հասարակաց գործերու մասին։ Յետոյ Դաշնակցական Պատգամաւորաց ժողով մը կը կազմուի որով միջազգային երեք հաստատութիւններ կը հիմնուին։ օրենսդրական իշխանութիւն, դատական իշխանութիւն և գործադիր իշխանութիւն։

Անգամ մը որ Դաշնակցութիւնը հաստատուի, անոր առաջին խնամքը պիտի ըլլայ ապահովել մարդկային կիանքի բացարձակ յարգանքը։ Մարդասպանը պիտի պատժուի որոնցմէ և ինչ դատաւարգէ ալ որ ըլլայ։ Տարբերու-

Թիւն չպիտի դուռի անհատական մարդասպանութեան իբր ոճիւր և հաւաքական մարդասպանութեան մէջ՝ իբր յուզման արգիւնը, Դաշնակցութիւնը պարտաւոր է ապահովել որ երկրագնդի վրայ ամեն անհատ իր աշխատութեան արդիւնքը վայելէ անկասկածէն։ Սակայն իրաւունքի սեփականութեան այս հիմնական ապահովութիւնը անկարելի է ցարձափ մարտաւարութեան գոյութիւն ունենալ։ Ուրեմն Դաշնակցութիւնը կազմելու է տեղեկական միացում մը։ 1798ին Ֆրանսայի մէջ եղածին մեծը, ամբողջ երկրագնդի վրայ մարտայի բոլոր պատենէններու ջնջումը Հարկ չէ ըսել թէ այս միայն պիտի աւելցունէ անհունորէն մարդկային երջանկութեան չափը։ Որչափ երկար ժամանակ որ մարտաւարութեան գոյութիւն կունենան այդ երջանկութիւնը զգալապէս կանհետանայ։

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍԻԱ 1 ՈՒՐԵՐ

Կովկասի հայ—թրքական ընդհարումներուն առթիւ կառավարութեան դատապարտելի ընթացքի մասին Տումայի մէջ հայ թուրք և վրացի երեսփոխանները հարցապնդում առաջարկած էին։ Բեդերսպուրկէն Մ'շակին ստացած հետեւեալ հեռագիրը ցոյց կուտայ թէ թուրք երեսփոխան Ջիախանովը ևս Հայերուն նման չառ գիտակցօրէն խօսած, իր ազգի յիմարութիւնը խոտտովանած և ուղղակի ռուս կառավարութիւնը պատասխանատու բռնած է։ Նոյնպէս վրացի

երեսփոխանները, և խնդրած են Տումայէն իր կողմէ քննիչ յանձնախումբ մը զրկել կովկաս, ինչպէս Պէլոսթօքի հրէից շարքին առթիւ զրկուեցաւ որպէսզի պետական ներկայացուցիչներու առջեւ պարզուի ժողովը այլանդակութիւնը իշխանութեան։

Ահա հեռագրաւորերը, նոյնութեամբ։

Պետերբուրգ, 12 յունիսի

Մասնաժողովը առաջարկում է պատգամաւորներ Տէր-Պետրոսեանցի, Թումանեանցի, Բահաթեանցի և Ջիախանովի արած հարցապնդումի ծրագիրը, Մինիստրներին խորհրդի նախագահին ուղղված հարցապնդումը կովկասեան արմինիստրացիայի օրինագրանցութեան, անգործութեան և իրաւունքից զուրկ գալու մասին, որի նորհիւ ամբողջ տարի ու կէս է հայերն ու թուրքերը իրար հետ պատերազմ են մղում, պաշտպանում է զեկոյցանող Ջիախանովը։

Ջիախանովը մի կռակոտ ճառով նկարագրում է այն պատկերը, որի ֆօնի վրա ծագեց ցաւալի պրօվօկացիան։ Նա ասում է. «Իշխանութիւնը այն պատճառով էր վերջին ժամանակներս աւելի զիջողաբար վերաբերում դէպի մեզ թուրքերս, որովհետեւ մենք նորհեալ էինք ամբողջ հարկեր տարի, ապրում էինք խաղաղ հայերի հետ, չէր կային բոլորովին զինուած ընդհարումներ։ Մեզ սկսեցին հաւատացնել թէ հայերը ստեղծում են իրենց համար թագաւորութիւն, կը կլանեն թուրքերին։

Հայերին վախեցնում էին պանիսլամիզմի տեսիլներով։ Բաւական էր գրեթէ անկասկածաբար, որովհետեւ մենք արեւան ձովի մէջ։

Բահաթեանը ծանօթացրեց Դումային հարցապնդումը առաջարկելուց յետոյ տեղի ունեցած նոր փաստերի հետ։

Կովկասեան ջարդերը բացառիկ են իրանց ծաւալով։ Նրանք գերազանցում են բոլոր միւսերից, իրենց ականատես ծանօթացնում է Դումային Բագուի և Շուշու ջարդերի հետ։

Իրան՝ ճառախօսին բանտ նստեցրին գաւառապետ Ֆրէյդիխ ստայոյ գեկուցումի հիման վրա, որին ինքը մերկացրել էր։

Այնուհետեւ իրերի գրութիւնը չէ լաւացել։ Պատժական զօրախմբերի փոխարինում էր կոտորածը։ Այնտեղ անտանելի է ապրելը։ Ազգաբնութիւնը չէ հաւատում սպառնութեանը լոկ խօսքով։

Տէր-Պետրոսեանցը լուսաբանում է հայերի օպպօզիցիօն տրամադրութեան պատճառները, կանգ է առնում գիւղացիութեան անտեսական սարսափելի քայքայման վրա, որովհետեւ ներկայ գոյութիւն ունեցող պայմաններում հարաւորութիւն չը կայ զաշտային աշխատանքներ կատարելու։

Գոյեցիների ժամանակ հայերը դրուած էին օրէնքից դուրս։ Եկեղեցական կալուածներին գրաւումով, ընտրողական, կառավարութիւնից անկախ հոգեւորականութիւնը ուզում էին դարձնել հաւատարիմ ծառաներ ինքնակալութեան։

Հայերի ժողովրդական դպրոցները փակվեցին, իսկ հայոց ժողովրդական փոփոխութիւնը ուղղում էին առաջ տանել մեր բուսացումը։

Ռազիշի ի ին վառ գոյներով բնորոշում է կովկասեան աղմինիստրացիային։ Նրա մէջ մտնում էին ծառայելու ռուս ազգաբնակչութեան տականքներ։ մենք ռուսներին ճանաչում էինք միայն ամենամատթար կողմերից։ Ահա այդտեղից էլ ծնունդ է առել մեր սեպարատիստութեան աղբիւրը։ Պրօլետարիատի ծագումով կատարվեց հաշտութիւնը ռուսների հետ։ Հզօր պրօլետարիատը միացրեց բոլոր ազգութիւններին ազատութեան համար մարտնչելու։

Հարցապնդումը Դումայի կողմից ընդունվեց միաձայն։



մընէ... Այսպէս, մայրն ու աղջիկը կը խօսէին, կ'աղօթէին ու փառք կուտային Աստուծոյ որ բարի հրեշտակ մ'իջեցուցած էր երկնքէն և ազատած էր զիրենք։

Սահած էին եօթն ամիսներ... Ձմեռ էր։ Բնութիւնը ծածկուած հաստ ու թանձր ձիւնի խաւերու տակ ու սառնամանիքը կը փչէր անդադար։ Հարուստը, աղքատը... ամենքն ալ իրենց տուններու մէջ քաշուած էին։

Գիշեր մը, ուր սաստիկ բուք մը կար, յանկարծ կարկաղ Ախպըր դուռը զարնուեցաւ ուժգին հարւածով մը։ Ներսը կը նստէին Նազենիկ խաթուն Վարսենիկ ու ինքը։ Անմիջապէս կարկաղ Ախպըր գնաց դուռը բանալու։ Ինչ յետոյ երիտասարդ մը ներս եկաւ։ Ուղեքն մինչեւ գլուխը հաստ ու երկար հապաղով մը ծածկուած էր ան ու գլուխը խոշոր շալ մը փաթթած էր։ Դէմքը չէր երեւար ու մօրուքն ու պիտիւր սառ կապիւր էին։ Անծանօթ երիտասարդը Նազենիկ խաթունին մօտեցաւ ու՝ արցունքով մը լեցուած անոր կուշտն ինկաւ ու ըսաւ։

ՐՈՒՍԻԱ

ԲՈՒՌՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տ Ո Ւ Մ Ա Յ Ի Մ Է Ջ

Պետական Տուման շարունակեց վիճարանութիւնները մահուան պատժի ջնջման և համախմբումներու ազատութեան մասին ներկայացուած օրինագծին վրայ։

Բոսֆէսէօր Մաքսիմ Գոսալէվսքի՝ երկար բացարձակութիւններ տալէ յետոյ Եւրոպայի և Ամերիկայի օրէնքներու մասին, անգլիական սիստէմը նպաստաւոր գտաւ։ Ատենախօսը անգլիացի բոֆ. Տէսթի թէօրին պաշտպանեց, որ համախմբումներու իրաւունքը չը հաստատուի։ Բայց միայն խօսքի և ուղած տեղը երթալու ազատութիւնը կը յարգէ։ Այս երկու իրաւունքն ալ համախմբումի ազատութիւն ըսել է։ (Ձախէն երկար ծախսարկութիւն)։

Բոսֆ. Գոսալէվսքի Գարալէյէֆ խօսեցաւ երկար ճառ մը, որով բացատրեց թէ մահուան պատիժը պէտք է ջնջել արդարաւստիական և գիտական տեսակետով։ Քաղաքական տեսակետին գալով, յիշեց ֆրանսական յեղափոխութիւնը և ըսաւ թէ ռուսական Տուման պարտաւոր է մահուան պատիժը ջնջել, որպէսզի Ռուսիոյ մէջ ոչ մէկ մարդասպանութիւն օրինաւոր չը համարուի։ Ատենախօսը եզրակացուց ըսելով թէ կը պահանջէ մահուան պատիժի ջնջումը ոչ թէ միայն խաղաղութեան ատեն այլեւ պատերազմի ժամանակ։

Արդարութեան նախարարը օրինակ տուաւ Միացեալ Նահանգները, ուր մահուան պատիժը պէտք է հղաւ գործադրութեան դնել անիշխանութեան մեծ ծաւալ ստանալուն պատճառաւ։ Եւ ըսաւ նախարարը կառավարութիւնը չը կրնար պատժել հրաժարիլ այնպիսիները որոնք օպաննեցին հայրենիքին հաւատարիմ զաւակները։ (Անգղիկներ, կը բաւէ՝ կը բաւէ այ)։ Նախագահը ոտքի ելաւ ու ըսաւ թէ կանոնը չի թոյլադրեր ատենախօսը խօսելէ արգիլել։

— Ես եմ, Նազենիկ, ամուսինդ եմ... ուր են զաւակներս։

— Ո՛հ, դու՞ն ես, Գարեգին... բազանչեց Նազենիկ խաթուն ու անոր վրայէ մէկդի նետեց հապան, քակեց տրեխներն ու գուրգուրանքով մը մինտարին վրա նստեցուց զինքը։

Վարսենիկ, որչափ որ խորթ հայրն էր, դարձեալ չը կրցաւ հանդուրժել, անոր գիրկն ինկաւ ու համբուրեց։

— Խեղճ աղջիկ, ուր էիր... ինչպէ՞ս ազատեցար, համբուրեց Նազենիկ խաթունին ամուսինն, որուն անունը Գարեգին էր։

— Վերն՝ Աստուած ու վարը՝ սա բարի հայրս ազատեց իմ կեանքս, պատասխանեց Վարսենիկ։

Գարեգին կը տփուէր՝ կայլայլէր ու անոր երեսի գոյնը կը չլլէր, ինչպէս վերջապէս ցոյցը մշտնապատ երկնքին վրայ։ Յայտնի էր որ կը տառապէր ան ու ցաւի մը սաստկութեան ներքեւ երթալով կ'ընկճուէր... Վերջապէս չը կրնար զօպել, գլուխը կախեց ու ինկաւ կնոջն ու Վարսենիկին գիրկը։

Կարկաղ Ախպըր իսկոյն բռնեց զինքն

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ՊԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ժ. Բ.

Նազենիկ խաթուն իր կորուսած աղջիկը գտած էր և ուրախ էր որ ան հոգեզաւակն եղած էր այն մարդուն որուն անձնութեան ու գործունէին մէջ գթութեան մարմնացումը պատկերուած էր։ — Ո՛հ, Վարսենիկ, կը կրկնէր թշուառ կինը, գիտե՛մ, դուն բարի ես ինչպէ՞ս բարի էր քու հայրդ... ատոր համար Աստուած այս առաքելն իմարդը փրկեց որ ազատէր քեզ այն զարհուրելի անկումէդ, ուր կը տառապէիր աւելի քան երկուք ու կէտ տարի։ Դու ձայնդ, քու պաղատամքդ մինչեւ երկինքը բարձրացաւ... ու դուն արցունքդ գիշեր ու ցորեկ թափելէ չը դադրեցար։ Երջանիկ եւ

Մովսիսին գրեալ որ դատախազը Մ. Բազմով համապատասխան բացատրեց թէ ծովային նախարարութիւնը չը կրնար Տումայի փափաքը ընդունիլ։ Անոր խօսքերը ընդունուեցան «Անկեղծ մարդասպանները» ազգականներով։

Աղմուկը այնչափ մեծացաւ որ արեւ. նախարար չը կրցաւ իր ճառը շարունակել։ Կը պոռային «Մարդասպան նախարարները պէտք է հրաժարականներ տան»։ Շատ երեսփոխանները յառաջացան ղէպի բեմ բռնեցին սեղմած։ Դադախազը վարկեալ մը անշարժ մնաց, յետոյ սրահէն հեռացաւ։ Նիստը դադարեցաւ ժամու մը չափ։ 6 ուկէսին վերսկսաւ։

Զախակողմի եւ սահմանադրական կուսակցութեան ատենախօսները յայտնեցին թէ Տումայի ընթացքը պէտք է վերագրել դատախազ Բազմովի ղէմ եղած ընդհանուր արհամարհանքին, անոր կեանքը ոճիրներով լեցուն է։ Աջակողմի ատենախօսները, կոմս Հէյստէն, եւ իշխան Ոլթանսկի, բողոքեցին ցախակողմի ընթացքին ղէմ եւ ըսին թէ Տուման չի կրնար շարունակել աշխատութիւնը այս պայմաններու մէջ այս ընթացքը կրնայ արիւնհեղութիւն մը առաջ բերել Ռուսիոյ մէջ։

Ընկերավարական երեսփոխան իշխան Բարաթով ըսաւ թէ Տուման դատախազ Բազմովի խօսքը արգիւից եւ պիտի արգիւի նաեւ ամեն անոնք սրտք ոճիրներու ջատագովութիւն կ'ընեն։

Յետոյ Տուման ընդունեց անապարկութիւն մը թէ ինք պիտի շարունակէ մահուան պատիժին նկատմամբ վիճաբանութիւնը մինչեւ որ օրինագիծը քուէարկուի։ Ներքին գործոց նախարարի օգնական Մ. Մարաքով ըսաւ թէ ներքին գործոց նախարարութիւնը պատրաստ է օրինագիծը կապակցեալ նկատելու օրէնքները վերաքննելու այն օրինագիծին որուն կը վերաբերի։

Շատ մը երեսփոխաններ մահուան պատիժը ջնջելու նպատակաւ խօսեցան Օյնէէֆ քահանան ըսաւ թէ Աւետարանը մահուան պատիժը ջնջած է եւ թէ տիրոջը չարչարանքները սրբազան ճշմարտութիւն մը հաստատեցին թէ ոչ մէկ կառավարութիւն իշխանութիւն չունի մարդու կեանքին վրայ եւ թէ մահուան պատիժը բոլոր գործադրութիւնը ոճիր նկատուած է։

ու սկսաւ ջուր ու քացախ դարնել անոր երեսին։

Գարեգին աչքերը բացաւ ու բացազանցեց։

— Ա՛խ, սի՛րտս, սի՛րտս կայրի... բացէ՛ք զայն...։

Վրայի շապիկը հանուեցաւ... ան ատեն կուրծքին տակ մեծ վէրք մը տեսնուեցաւ, որ արիւնի լերդերու մէջ կը մնար ու գոցուած էր։

— Ինչ եղած է... հարցուց կարիւր Ախպէր։

— Զարնուեցայ... գնդակ մը մըխաւած է հո՛ւն... յայտնեց Գարեգին։

Այդ գիշերը սպասելու չէր գար։ Կարիւր Ախպէր շուտով մը քաղաքը մէկը խրկեց ու գաղտնաբար հայ բժիշկ մը կանչեց, որ ծանօթ էր իրեն։

Բժիշկը յաջողեցաւ վիրաւորեալին կուրծքը միտուած գնդակը վարպետութեամբ մը դուրս հանել եւ քիչ ատենէն վէրքը բոլորովին բուժել։

Գարեգին ամիսէ մը ետքը ապաքինացաւ։ Մակայն տխուր էր, եւ ա՛յն բարի մարդուն քովը չուզեց մնալ, որ ամեն ջանք խնայած չէր իր կեանքը փրկելու։ Կնոջ յայտնեց որ մտա-

Տուման միաձայնութեամբ ընդունեց մահուան պատիժը ջնջումի առաջարկութիւնը։ Այս առաջարկութիւնը յանձնած է 15 անդամներէ բաղկացեալ յանձնախմբի մը ուսումնասիրութեան որպէսզի զայն օրինագիծի մը վերածէ։

Նիստը վերսկսաւ ժամը 9. 45ին։ Տուման միաձայնութեամբ ընդունեց մահուան պատիժը ջնջումը։



Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կ. Պօլիս 3 յունիս — Հայոց պատրիարքը Օրմանեան իր հրաժարականը տուաւ։ Կաճաճաճ է վերջերս խուզարկութիւն կատարուելը պատրիարքարանի մէջ և Հայոց ղէմ հարածանքը գաւառներու մէջ։

Այս հեռագրին բացատրութիւնը իր մէջն է։ Օրմանեան որչափ ալ հաւատարմութիւն և գետնաքար ծառաութիւն ցոյց տուաւ յուլթանին ու իր կառաւարութեան, կրկին չը կրցաւ գոնէ իր պատրիարքարանին վրայ թուրքին վստահութիւնը շահիլ։ Սուլթանին հետ հաշտ քաղաքականութեան հետեւիլ առաջարկողները արդեօք կրնա՞ն երևակայել թէ Օրմանեանէ մը աւելի Սուլթանին հաշոյակատար ըլլա՞յ հայ ժողովուրդը։ Եւ եթէ ըլլայ իսկ, որ անկարելի է, բարեկամութեանը կարելի է՞ այլ ևս վստահել։

— Պապատաղի տէր Աբիսողոմ քհն. Թորոսեանը այսօր վառնա կը սպասուի տեղւոյս եկեղեցոյն մէջ քահանայագործելու պաշտօնով։ Թաղ. խորհուրդը 3 սենեակնոց տուն մը վարձու կը փնտռէ յիշեալ քահանային համար։

զիր էր իր տունը բնակիլ։ Նազենիկ խաթուն ամուսնունց առաջարկութիւնն ընդունեց եւ կարծեց թէ անոր ծանր կուգար ուրիշին հացովն ապրիլ։ Բայց ամեն ատեն վարսենիկին բնակարանը կերթար՝ կուգար։ Գարեգին, որուն սրտին մէջ սեւ օձ մը սկսած էր գալարուել, նախանձէն չը տարաւ այս ընթացքն ու բացէն ի բաց օր մը կնոջն ըսաւ։

— Կը պատուիրեմ որ դուն վարսենիկիդ բնակարանը չ'երթաս, թո՛ղ ան գայ քեզ տեսնելու...։

— Ինչու համար, հարցուց կինը։

— Զեմ ուղեր... կը հասկնա՞ս։

— Զեմ հասկնար... յայտնէ՛ միտքը։

Գարեգին պահ մը ռարստալի մտածուէ մեք, յարեց։

— Գիտե՞մ ո՞վ է վարսենիկիդ հարկոյանող մարդը։

— Գիտեմ։

— Ո՞վ է։

— Առաթինի մարդ մը, հրէշտակալին ոգի մը, վերջապէս փրկիչ մընէ։

— Յետո՞յ։

— Այդչափ։

— Տէր Ստեփան քհն. Կիւլիւմեան Պրաիլայէ հրաժարելով եկած Պուրկազ հաստատուած է։

— Կալացի տէր Ղեգնդ քհն. Փափագեանը կը շարունակէ տակաւին իր պաշտօնը, հակառակ իր պայմանաժամը անցած և տեղւոյն ազգայիններու մէկ կարեւոր մասին ալ առելի դարձած ըլլալուն։ Բայց ո՛ւր երթայ մարդը շատ տեղեր չինքը չեն ուզեր, իւր. ու ա՛ւեւ տեղ չերթար։

— Ստացանք «Շիրակ» հանդէսի Բ. տարւոյ առաջին թիւը (յունիս)։ Այս անգամ Շիրակ Գահիրէի մէջ կը հրատարակուի, ընդ տնօրինութեամբ Տ. Տ. Թէքէեանի և Մ. Կիրճեանի, որոնք տարւուն մը համար խմբագրութիւնը յանձնած են Տ. Արփիար Արփիարեանի։ Հանդէսին նոր հասցէն է

Խմբագրութիւն «Շիրակ» հանդէսի Բաթի տուփ թիւ 37 (Եգիպտոս) Գահիրէ

— Գահիրէի երեսփ. ժողովը որոշեց Սուտանի կառավարութեան գետին մը խնդրել՝ Խարթումի մէջ Հայ եկեղեցի մը և դպրոց մը կառուցանելու համար։

— Սանասարեան վարժարանի եկամուտը աւելցնելու համար իսմայիլ փաշա խանի կոչուող կալուածին վրայ յարկ մըն ալ պիտի աւելցուի ասոր համար 9000 ոսկի յատկացուցած է խնամակալութիւնը։

— Լաւաքեր կիմանայ թէ տղրահոյակ և հայակուլ ուաղուկապետ Շալաֆ պէյը՝ զոր ասկէ տասը տարի առաջ Խանասորի արշաւանքի տուն Դաշնակցականները սպաննած ըլլալ կը կարծէին, այս անգամ Վանի մէջ հայ արհեստաւորէ մը սպաննուեր է։

— Զըմ... այդչափ չէ... չը հարցունե՞ս ինքզինքիդ թէ ինչու կ'ապրի ազդկանդ հետ...։

— Աղջիկս անոր որդեգիրն է։

— Իմենեւի՞ն... աւելի ճիշտ կըլլայ ըսես անոր գաղտնի հարձն է...։


— Անոր հարձը...։

— Այո։


— Ո՛հ, մեղք կընես քեզի... պարապ տեղ առաքելի մարդու մը ու հրէշտակ վարսենիկիս արիւնը մի՛մաներ, սրբիկ ամուսինս։ Ես քանի մ'ամիսէ քովերնին մնացի եւ գիտեմ թէ հայր մը չը կրնար ունենալ ա՛յն անքիծ, անարատ ու գրգռի գորովանքը, զոր այդ մարդը կը տածէ վարսենիկիս նկատմամբ եւ, փոխադարձաբար, ասկից նոյն խանդաղատայի սիրոյն փոխաբէնը կը վայելէ։ Չէ՛, Չէ՛, վերն Աստուած կայ... հոգիդ մի՛ սեցուներ ու երբէ՛ք ասանկ քստմեղի գաղափար մը մի՛ անցուներ ուղեղիդ մէջ։ Ան տառապող մ'եղած է մեր արցունքի ու արիւնի աշխարհին մէջ ու բաղդին բերմամբ հասկցած է աղջկանս հայ ըլլալն եւ ազատելու համար նուիրած է իր բովանդակ կեանքը։ Բոլորը

— Մատթէոս վարդ. Աճէմեան ժամանակ մը Պօլիս, յետոյ Պարսկաստան և էն վերջը Ամերիկա ժողովուրդը զգո՞հ թողուցած ըլլալով, վերջապէս կարգէն հրաժարեր, գործորտն մը մտեր է աշխատութեամբ ապրուստը ճարելու համար։

Արտասահմանի մէջ ունինք մէկ քանի այդ կարգի քահանաներ ևս, որոնք եթէ Մատթէոս վարդապետի պէս եկեղեցականութենէ հրաժարելով ինքզինքնին գործատուներ նետեն ժողովուրդը փորձանքէ ողատած կըլան։




ՊՈՒԼԻՍԻՈՅ ԵՒ ՌՈՒՄԱՆԻՈՅ
ՊՍՏ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ



Նկատելով որ բարեջան խորհուրդներու մէկ մասէն տակաւին չը հասաւ մեզ փոխարժէքը 27 մայիսին զրկուած տօմսերուն, այս ժիակ պատճառով ստ/պուեցանք հակառակ մեր կանխաւ յայտարարութեան, յետաձգել 26 թիւի վիճակահանութիւնը յառաջիկայ ինքզ. օրուն 29 Յունիս։ Արդ. կը խնդրենք պատ. խորհուրդներէն որ հաճիք մինչեւ որոշեալ ժամանակամիջոցը փութացնել ձեզմէ սպասուած նպատակները։

18 Յունիս 1906
Թ. ԲԱԶՄՈՎԸԲ

Խորին յարգանքներով
Ի դիմաց Խորէն Ազգ. վարժարանի
Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Թագւոր Միքայէլեան Թար. Գէորգեան
(Կնիք)



ա՛յս է... մի՛ պղտորեր մտածումներդ։

Գարեգին ընկճուած մնաց այս գերագոյ հաւատքին հանդէպ զոր իր սիրելի կնիւր կ'արտայայտէր. պահ մը գլուխը ծռեց ու խորուկ մտածումի մը մէջ ինկաւ։ յետոյ ճիգ մ'ընելով ինքն իր վրայ ըսաւ։

— Խիստ լաւ, անցեալ շաբթուն ինչ մատանի վրայ էր կը խօսէիք աղջկանդ հետ... ես զուարթ կեցայ ու մտիկ ըրի։

— Մատանի՞ մը... գոչեց կնիւր՝ գրէթէ այլայլած կերպարանքով մը։

— Այո։

— Ըսեմ քեզի, առջի էրիկէս մատանի մը չ'ունէի...

— Է՞յ...

— Ատիկայ Զէքի պէյին մատն է եղեր։

— Յետո՞յ։

— Երբ այդ գաղանէն իր վրէժը կը լուծէ...

— Ինչպէ՞ս։

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Պատրիարքարանըն եկնիտէն եօգլանըլմասը վէ թաշրալարտա երմէնիլէրին թէզեիգ օլընմասը սէպէպլէրի իլէ Պատրիարք Օր մանեանըն իոթիֆա իթտիկի թաստիգտէն սօնրա, յուլիս 4 թարիիլէ Սթանպօլտան եէնի պիր թէլէկրաֆ տախի աթիտէքի մալիմաթը վէրիյօր,

«Սուլթանըն էօմրիւնէ սուէի գասթ իչիւն թէրթիպաթ կէօ ըրիւտիկի Սօֆիատան շայանը էմ- նիյէթ իրպարաթ իւզէրինէ, Նէնիպ բաշանըն տիրէթթօրըլը ալթընտա պիր թահգիգաթ գօ- միսիօնը թէշըիլ օլընտը,

Էրմէնի կազէթալարըն տէօրթ տիրէթթօրըլարըն վէ պաշ մու- հարրիլէրին խտնէլէրի պու կիճէ եօգլանըլտը, Բեաֆէսի տէրտէսթ օլընտը»

— Սթանպօլտաքի ըուս էլչիսի Ջինօլիէվ Բեթերսպուրկա կիթ- մէք իւզրէ էքսրէս թըրէնի իլէ Սօֆիա կարասընտան կէշմիշ տիր-

— Տրապիզօնտա եըլտըլտան կէօնտէրիլմիշ օլան պինպաշը Նէնիպ պէյ իոքէլէնին Նէգարէ- թինի տէրէօնտէ իթմիշ օլուպ, Էրմէնի եօգլուարըն էնվաի միւշ- քիւլաթա ուղրաթմագտա վէ ըըշվաթ ալմագսըզըն քիմիէի պըրագմագտա տըր, Պիր թա- գըմ Նիղամը բասաթօրթ էլլէ- ըրնտէ օլան վէ խարիճտէ թի- ճարէթլէ մէշղուլ վէ սիւլայա կիթմէքտէ օլան միլլէթտաշլա- ըըմըզ Տրապիզօն իսքէլէսինտէն կէրի չէվիլիլմիշ տիրէր. ըըշ- վաթ վէրէնիլէր կէշմիշէր. քէզա մէմլէքէթտէն թիճարէթ իչիւն խարիճէ չըգմագ իսթէյէն էր- քէկլէրտէն մատա, գօճասընըն եախօտ էվլատընըն եանընա կիթմէք իչիւն եօլա չըգան վէ բասաթօրթ վէ թէզքէրէլէրի էլ- լէրինտէ պուլընան գատընլար տախի եօլտան կէրի չէվիլիլ- մէքտէ տիրէր. Նէնիպ պէյտէն մատա, Բուհի էֆ. վէ միւտտաի ումուժի էօմէր Լութֆի Նամ միւրթէքիպլէր պիրէր պէհանէ իլէ պիր չօգ Էրմէնիլէրի սօյ- մագտա վէ եախօտ մահպուհա- Նէլէրտէ չիւլիւտմէքաէ տիրէր:

ՏԱԽԻԼԻԷ

— Պու սապահ վառնա իլի- մանընա կէլէն վարօրտան եէնի Բոււ տէսթթը իոքէլէ բրիստա- վը իլէ պէրապէր գարայա չըգ- տըզըն էսնատէ, իսքէլէ իւզէրին- տէ պիրիթմիշ օլան խալք անլէ- ըի թաշլատը, էօյլէքի տէսթթ

էօմրիւնի թէհլիքէտէն գուր- թարմաք իչիւն վարօրա տէօնմէ- յէ մէնպուր օլտու, Պու վագաա էսնասընտա՝ չէհրիմիզ թիւրք թիւճար վէքեալէթինին պաշ քեաթիպի Գաղան էֆ. իսքէլէ ճիվարընտա պուլուռուր իքէն, քէնտիսինի չիմիլէսի ալթընա սիքէր իտէրէք տաիրէսինէ գաշ- տը:

Ֆրանսատան եէնի իսթիգրազ իթմէք թէշէպպիւսիւ շիմտիլէք սույա տիւշտիւ, զիրա ֆրանսըզ պանգալարը ալըր շարթլար թէք- լիֆ իթմիշէր:

— Ֆրանսատա Պուլկարիս ի- չիւն եաբըլան թօբլար իչէ եա- ըամազ տէյու չըգան շայէայը թէքիպ իթմէք իչիւն հիւքիւ- մէթ մէքքիւր թօբլարըն էննէպի աթաշէլէր էօնիւնտէ թէճրիւպէ էթտի վէ բէք կիւզէլ օլտըզլարը թէպէյիւն էյլէտի:

— Վառնա իչիւն Նասպ օլընան եէնի Բոււ տէսթթըն շիմտիլէ գտտար պուլընտըզը մէմուրիլէթ- լէրտէն սուլայը Բաթրիգհանէ պուլկար հիւքիւմէթինէ իյա- հաթ վէրմէսի իւզէրինէ, հիւ- քիւմէթ անը գապուլ իթտի, ֆաղաթ վառնա պուլկար էհա- լիսինին զիւլեանը թէսքին օ- լանա տէկին տէսթթըն կէլմէսի թէէլիլ օլընմասընը թալսիլէ իթմիշ տիր:

ՄԻԻԹԵՆԵՎՎԻԷ

Նաշու ժիզնին իշարը իւզրէ, եագընտա Ձար վէ իմէհրաթօր Վիլհէլմ Տանձիկտէ կէօրիւշէ- ճէքէր իմիշ:

— Ալման վէլիտիտը իւք էվ- լատը սօղուրտու, անը Վիլհէլմ թէսմիլէ իտէճէքլէր:

— Յիւրիս— Կէշէն ոէնէ գեկ- տեմըբտէ անարշիսթլէրէ գար- չը թէրթիպ օլընան գանսնամէ պու յուլիո 1տէն իթիպարէն մէվգըր իճրայա գօնուլիեօր, Սօ. սիալիսթլէր պուլնո գարչը բօ- թէսթ իթմէք իչիւն՝ մէմլէքէ- թին տտէթի իւզրէ 30000 իմզա թօբլաեամաթըլարընտան՝ գալ- ըէթլէրի սէմէրէսիլ գալտը:

— Բօզէնպէրկ Նամ անարշիս- թին Ալմանիայա կէլմէք իչիւն եօլա չըգտըզըն Նիւ-Եօրքտան Պէրլինէ պիլտիլիլմիշ: Ձան- նիաթա կէօրէ՝ Բօզէնպէրկ Վիլ- հէլմէ գարչը պիր բըլան թէր- թիպ իթմէքտէ տիր:

— Սիաթըլիտէ եօգլամա էս- նասընտա՝ պօմպա վէ ճէհէննէմ մաքիւնալարը եաբմագ իչիւն պիր ճէսիմ ֆապրիգա պուլըն- տըզը թէպէյիւն իթմիշ տիր:

— Ժօրէս պիր թագըմ տիկէր մէպուսլար իլէ պէրապէր իտամ ճէզասընը գալտըրմագ իչիւն Ֆրանսա բարլըմանընա պիր պէ- յաննամէ թագտիմ իթտի:

Ի Ո Ի Ս Ի Ա

Իտամ ճէզասընըն գալտըրը- մասը իչիւն Տոււմատա հիւքիւմէ- թէ գարչը միւհատէլէրտէն սօն- րա, իթթիֆագը արա իլէ գա- րար վեբիլտի, Եանի պիր միւհ- ըմիլը պիր գաթիլին հիշ պիր վագըթ էօլիւմէ մահքիւմ իտիլ- մէսիլի գապուլ իթմէյօրլար:

— Կալկասիա մուհաթըզը օլան Միլկըլէի Նամ ալայըն պիր չօգ ասքերլէրի թէլէկրաֆ իլէ Տու- մայա միւրաճաթլէ արգատաշ- լարընտան 27 նէֆէրին էօլիւմէ մահքիւմ իտիլմէսինէ գարչը բօթէսթ իթտիլէր:

— Վարչալատա 6 բօլիս իւզէ- ըրնէ ընվօլլէրլէր աթըլըպ, իքի- սի էօլմիւշ վէ տէօրտի եարէլէն- միշ տիրէր:

— Օտէսատա սօն գարըշըզ- լըզլար սէպէպի իլէ եէնիտէն իտարէի ասքերիլէ իլան օլու- տը:

— Պիր թագըմ սիւհաշլը ատամ- լար պիր վաթօրտան քիւլլիլէթ- լի բէթթէլին զասպ իթտիլէր. պու էնզա պօմպայա գուլլանը- լըր:

— Պիլիսթօքտա Եահուտի գըր- կընընը թերթիպ իտէն բօլիս գօմանտանը Սաեքով Բէթեթ- պուրկա չաղըրըլտը:

— Բէթէպուրկ մուհալազա- սընա մախսուս օլան օրտուըն գօմանտանը կրանտիւք Նիքօլա Նիքօլաշվիլ պիր իլաննամէ չը- գարուպ, պիրինճի ալայըն իս- թիլալ չըգարմասընտան սուլայը միւթէճասըլարը թուլթուլըշ օլտըզընը վէ ասքերիլէ մահքէ-

մէսինէ իհալէ օլուհաճաղարընը վէ Նիհայէթ միւհրիւմլէրին ճէ- զալանմասը իլէ սէլքի ասքերիլէ իրաա իտէն լէքէնին օլ վէճհիլէ սիլինէճէկինի իլան իթմիշ տիր:

— Սապըգ չըրաթ Նաղըրը վէ մէճիլիս ալան աղասը Ս. Էր- մօլով եէնի գապինէի թէշըիլ իտէճէք իմիշ, Պու զաթ սէր- պէստիլէթ թարաֆտարը ատտ օլընըյօր, վէ էլեէվմ Տոււմանըն թէշսիլի աղալարը իլէ մուխա- պէրտէ իմիշքի՝ օնա կէօրէ գա- պինէնին գաթիլէն թիւքիլինի տէրէօնտէ իտէճէք:

Պիր թէլէկրաֆա պինսէն, Մ. Էրմօլով եէնի գապինէի չու եօլ- տա թէշըիլ իթմիշ:


Բրէնս Բուսով Տախիլիյէ Նապօքով՝ Խարիճիյէ Կէնցէեշթէյն՝ Մալիյէ Ստահովիշ Ջըրաթ թիմիրաշվ՝ Թիւճարիյէ Գ. Գարալաշվ՝ Ատիլիյէ Գօնթ Հայտէն՝ Մէարիֆ Շայքթան՝ Նաֆաա

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական Բաժնեգիրը՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս- տանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպ- լի տարեկան: Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ»ի (Կովկաս) Թիֆլիս

Одговорникъ А. Курбетиянъ

редакция А. Тодоровъи С-не—Варна



ԲԱՄԱՑԱՅՑ ՕՄԵԿԱ

ՅԱԿՈԲ ԹՕՍՊԸԸԸԸՆՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգու. Ժընէվի եւ Պուլքսէլի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա- ցոյցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտա- րարուեստը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հաստատութիւնը:

Այս հռչակուոր Գործարանին ներկայացուցին է Տ. Յակոբ Թօսպըլքեանի վա- ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. ԳիւնեթԸ ՉԱՓԱԻՈՐ:

Կը գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու եւ ժամա- գարծններու քով: